# «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)

1. 4-րդ հոդվածի 4)-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

2. 4-րդ հոդվածի՝ 6-րդ կետից հանել «համապատասխան թույլտվության առկայության դեպքում» բառերը, իսկ «օգտագործումը» բառից հետո լրացնել «ինչպես նաև իրականացնել ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության» բառերով.

**Հոդված 2.** Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել նոր 17-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«17) սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետի շրջանակներում Իրավասու մարմնի գրավոր պահանջի դեպքում ներկայացնել տեղեկատվություն ՀՀ տարածքում իրենց ենթակայությամբ առկա օպտիկամանրաթելային և եթերային ցանցերի՝ թողունակության, աշխարհագրական տեղակայման, կառուցվածքային և ֆունկցիոնալ գծապատկերների ու տեխնիկական բնութագրերի վերաբերյալ:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: